

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2023 թվականի

Փետրվարի 02-ին կայացած գիտական խորհրդի նիստի

Օրակարգ՝

1. 2022-23թթ. ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի ամփոփում /զեկ.՝ Ա.Բաղդասարյան/:
2. Գնահատականները փոխանցելու «Ռեզիստր» նոր համակարգի անցման մասին /զեկ.՝ Ն.Ալավերդյան/:
3. Որակի ապահովման մշտական հանձնաժողովի կազմի անդամների հաստատում /զեկ.՝ Ա.Բաղդասարյան/:
4. Դասընթացը կրկնելու նոր կանոնակարգի մասին /զեկ.՝ Ա.Բաղդասարյան/:
5. Գիտական ղեկավարների և գիտական թեմաների հաստատման մասին /զեկ.՝ Հ.Մ.Ավանեսյան, Ն.Գ.Խաչատրյան/:
6. Ընթացիկ հարցեր:

1. Ա. Բաղդասարյանն ամփոփեց 2022-23թթ. ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանը:

Ուսանողների կողմից հնչեց հարց միջանկյալ և եզրափակիչ քննությունների վերաբերյալ: Շատ դեպքերում քննական հարցերը և միջանկյալի քննական նյութերը կրկնվում են:

2. Ն. Ալավերդյանը ներկայացրեց գնահատականների փոխանցումը «Ռեզիստր» նոր համակարգում: Արտահայտվեցին խորհրդի անդամները, ովքեր համաձայն չէին գնահատման 2 տարբերակներին՝ թղթային և էլեկտրոնային: Որոշեցին 2-րդ կիսամյակի համար ընդունել գնահատման երկու տարբերակները:

3. Ա. Բաղդասարյանը նշեց որակի ապահովման մշտական հանձնաժողովի կազմի անդամների հաստատման հարցը: Առաջարկեց 4 անդամներից բաղկացած խումբ, որից մեկն ուսանող է.

1. Ս. Պետրոսյան

2. Հր. Հովհաննիսյան

3. Ա. Հակոբջանյան

4. Հ. Ափրեյան

4. Ա. Բաղդասարյանը ներկայացրեց դասընթացը կրկնելու նոր կանոնակարգը: Ն. Ալավերդյանը հավելեց, թե որ դեպքում և կուրսում է հնարավոր այն իրականացնել / եթե 0 միավոր է և անթույլատրելի է 3-րդ կուրսի համար/:

5. Գիտական ղեկավարների և գիտական թեմաների հաստատման հետ կապված նշվեցին հետևյալ թեմաները.

1. Անաստասիա Շումանովա «Динамика адаптивных механизмов личности в период длительного военного конфликта», գիտ. ղեկավար հոգեբ. գիտ. դոկտ., պրոֆ. Ն.Ս. Ավանեսյան / ԺԹ. 00. 01

2. Ֆիդա Կեզել Օղլի «Անձի պաշտպանական համակարգի և էքզիստենցիալ պահանջմունքների հարաբերակցությունը տևական լարվածության պայմաններում», գիտ. ղեկավար հոգեբ. գիտ. թեկն., պրոֆ. Վ. Ռ. Պապոյան / ԺԹ. 00. 01

3. Սոնգ Ժեյու «Անձնային առանձնահատկությունների և ակադեմիական ներգրավվածության դերն ուսանողների հոգեբանական բարեկեցության մեջ», գիտ. ղեկավար հոգեբ. գիտ. թեկն., դոցենտ՝ Ն.Գ. Խաչատրյան / ԺԹ. 00. 01

4. Անի Գրիգորյան «Պատվասիրության», «Արժանապատվության», «Դեմքը չկորցնելու» մշակութային չափումների ուսումնասիրություն, չափողական մոդելի մնշակում», գիտ. ղեկավար հոգեբ. գիտ. թեկն., դոցենտ՝ Ն.Գ. Խաչատրյան / ԺԹ. 00. 01 – թեմայի փոփոխում:

5. Առաջարկվեց մեթոդ խորհուրդ հանձնել հոգեբ. գիտ. դոկտ., պրոֆ. Գ. Ս. Շահվերդյանի աշխատությունը՝ «Клиническая психология: исторический этюд»:

6. Ընթացիկ հարցերի շարքում քննարկվեց ֆակուլտետի կայքի վերաբերյալ հարցը:

ա/ Ա. Բաղդասարյանը ներկայացրեց, որ Համահայկական հիմնադրամը դրվել է գործողության մեջ հետևյալ ուսումնասիրությունների առաջարկությամբ՝

- Ազգային ինքնություն
- գ/հ աշխատանքներ
- հայագիտության վերաբերյալ աշխատանքների ներկայացում
- ամառային դպրոցի կազմակերպում

բ/ ներկայացվեցին «Լավագույն ուսանող» անվանակարգի հաղթողները

- մազ. 2-րդ կուրս՝ Ափրեյան Հասմիկ՝ փիլիսոփա- 2-րդ տեղ
- մազ. 2-րդ կուրս՝ Լալայան Գայանե՝ հոգեբան- 3-րդ տեղ

գ/ թեմատիկ քննարկումների շարքի շարունակություն

դ/ ռազմավարական ծրագրի ներկայացում

Նիստի նախագահ՝ Ա. Բաղդասարյան



Նիստի քարտուղար՝ Վ. Պապոյան